

## ԹՈՒՐԹ-ՔՐԴԱԿԱՆ ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ\*

**Բանալի բառեր** – քրդեր, թուրքեր, Արևմտյան Հայաստան, ժողովրդագրական աղետ, բումերանգ, Քրդական բանվորական կուսակցություն (ՔԲԿ), Ա. Օջալան, հարամ, հալալ:

Տարածաշրջանում անկասելիորեն առաջ ընթացող աշխարհաքաղաքական տեղաշարժերի ազդեցությամբ Թուրքիայում վերսկսված քրդական զինյալ պայքարը վկայում է, որ Հայոց ցեղասպանության իրականացման միջոցով բռնազավթված Արևմտյան Հայաստանի ճակատագիրը մինչ օրս չի վճռահատվել:

Մեր հայրենիքին տիրանալու համար քրդերի ու թուրքերի հետեղեռնյան արյունոտ դիմակայության նոր հանգրվանի հիմնական առանձնահատկությունը նրա անխզելի կապն է գլոբալ քաղաքականության մեջ նշմարվող՝ Մերձավոր ու Միջին Արևելքի արմատական վերակառուցման փորձերի հետ: Իրանց հիմքում ընկած է մի շարք պետությունների փլուզման, իսկ սյուններին նոր գործառույթներով օժտելու ռազմավարական հիմնանպատակը: Ուստի նախապես «խանդի տեսարաններ» սարքելու փոխարեն հարկ է ավելի սառը հայացքով քննել **Արևմտյան Հայաստանը** էթնիկ ու աշխարհաքաղաքական հակամարտությունների արյունոտ կրկեսի վերածվելու ներկա իրողությունը՝ հստակեցնելու համար հնարավորությունների այն սահմանը, որը ստեղծված իրավիճակն ընձեռում է նրա անմիջական մասնակիցներին ու նախ և առաջ՝ **«Մեծ Քուրդիստանի»**<sup>1</sup> երազանքով տարված քրդերի արմատական մասին:

\*Ընդունվել է տպագրության 20. 10.2015:

<sup>1</sup> Արևմտյան Հայաստանն իր մեջ ներառող «Մեծ Քուրդիստանի» ստեղծման ծրագիրն արտաբուստ հիշեցնում է մեզ քաջածանոթ «Միացյալ և անկախ Հայաստան» տեսլականի շրջված տարբերակը, որովհետև եթե «Մեծ Քուրդիստանի» քարտեզը պատկերում է Իրաքի հյուսիսային և Իրանի արևմտյան հատվածը՝ հարավ-արևելքից ձգվելով դեպի հյուսիս-արևմուտք, «Միացյալ և անկախ Հայաստանը» ներառում է նաև Հարավային Կովկասի զգալի մասը՝ հարավ-արևմուտքից հյուսիս-արևելք ուղղվածությամբ: Մինչդեռ այս թվացյալ նմանությունը թողարկում է այն իրողությունը, որ ի դեմս «Մեծ Քուրդիստանի» ստեղծման ծրագրի՝ մենք գործ ունենք «Մեծ Թուրանի» մասին համաթուրանական գառանցանքի քրդական տարբերակի հետ: Ինչպես ժամանակին «Մեծ Թուրան» էր պատկերում թուրքերի քոչի գրեթե ողջ երթուղին՝ Ալթայյան լեռներից մինչև Բոսֆորի ափերը, այսօր էլ «Մեծ Քուրդիստանն» է պատկերում քրդերի քոչի ողջ երթուղին՝ Իրանի արևմուտքից դեպի Մոսուլի կողմերը և այնտեղից էլ մինչև Արարատ լեռը:

ԿՎԿ համահայկական հանդես է (ԺԳ) փաթիլ, թիվ 3 (51) հուլիս-սեպտեմբեր, 2015

Հայրնի է, որ դարեր շարունակ քրդական ցեղերը Օսմանյան կայսրության հյուսիսագանդ գործիքների դերում են եղել՝ դրանով ապահովելով իրենց առաջխաղացումը դեպի հյուսիս՝ Հայկական լեռնաշխարհի բարձրադիր արտոբավայրերը: Քրդերի զանգվածային թափանցումները Հայկական լեռնաշխարհ օսմանյան առաջին սուլթանները դիպարկում էին շիա Պարսկաստանի դեմ սուննիական պայքնեշի, իսկ վերջին սուլթանները՝ Արևմտյան Հայաստանում հայերի համահավաք բնակությունը խաթարող էթնիկ հակակշռի համարեքստում: Անշուշտ, պարսության առանձին շրջափուլերում քրդերը նույնպես փորձել են անկախանալ Թուրքիայից, սակայն չունենալով զարգացման համապարասխան մակարդակ՝ ընդհուպ Հայոց ցեղասպանությունը լուրջ վրանգ չեն ներկայացրել նրա համար: Իրավիճակը փոխվեց Հայոց ցեղասպանությունից հետո, երբ թուրք փաշաներից մեկը, ճնշելով քրդերի հերթական ապստամբությունը, բազմանշանակ կերպով ակնարկեց. «Թուրքիայում մենք վերացրինք «ծո» ասողներին, հիմա պարսաստվում եմ արմատից մաքրել հայրենիքը «րո» ասողներից» (ընդգծումները մերն են-Գ.Խ.)<sup>2</sup>:

Պարձառն ակնհայտ է. Հայոց ցեղասպանության առաջ բերած **ժողովրդագրական աղերքի** արդյունքում խախտվել էր հայ-թուրք-քրդական զուգահեռ գոյակցությունը, և թվում էր, թե քրդերի բնաջնջման խնդիրը նույնպես ժամանակի հարց է: Բայց Ասրծո կողմից արեղծված համամասնությունների խախտումը **քուներանգի** նման հեր է վերադառնում՝ հարվածելով նրա հեղինակներին: Ուստի փոխադարձ կոտորածներով ողնկցված քրդական ապստամբությունների (Շեյխ Սայիդի՝ 1925, Արարաբի՝ 1926-1930, Դերսիմի՝ 1937-1938) դաժան ճնշումները սկզբունքորեն չփոխեցին երկրամասի ժողովրդագրական պարկերը: Պարզապես դրանց հետևած րեդասիանությունների արդյունքում քրդերի մի մասը հայրնիվեց Արևմտյան Հայաստանից և Քուրդիստանից<sup>3</sup> դուրս ու հասցրեց ինտեգրվել իրեն հավաքակցից թուրքական հասարակությանը: Թուրքիայի շուրջ աշխարհաքաղաքական դիմակայության 1920-1930-ական թվականների հանգրվանի իրական արդյունքը Մոսուլի նահանգի հանդեպ թուրքական հավակնությունների չեզոքացումն էր Մեծ Բրիտանիայի կողմից, ինչը հետագայում՝ Իրաքի ներսում, քրդերի համար դարձավ հենակետ ինքնավա-

2 Սա լեզվախաղ է երկու ժողովուրդների՝ հայերի և քրդերի հայտնի դիմելածների վրա: Տե՛ս **Martin van Bruinessen**, Mullahs, Sufis and Heretics: The Role of Religion in Kurdish Society: Collected Articles, ISIS Press, 2000, p. 183.

3 «Քուրդիստան» հասկացությունը մենք օգտագործում ենք Սևրի պայմանագրով նրա ձեռք բերած իրավական իմաստով: Չնոռանանք, որ Առաջին աշխարհամարտից հետո երիտթուրքերի դիվանագիտական խարդավանքների արդյունքում Ֆրանսիա ժամանած Շերիֆ փաշայի «քրդական պատվիրակության» ջանքերով զգալիորեն սահմանափակվել է Արևմտյան Հայաստանի (վեց վիլայեթներ) հայկական պահանջատիրությունը: Ի հաշիվ Դիարբեքիրի ու Խարբերդի վիլայեթների և Վանի ու Բիթլիսի վիլայեթների հարավային-քրդաբնակ հատվածների գիջման, հայերն ի վերջո համաձայնել են բավարարվել հետագայում ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի Իրավարար վճռով ամրագրված սահմանագծով: Բայց չնայած դրան, Շերիֆ փաշան Սևրի պայմանագրի ստորագրման նախօրեին անհետացավ դիվանագիտական ասպարեզից: Դրանով նա բացահայտեց «քրդական պատվիրակության» իրական նպատակները, որոնք վերջին պահին թույլ տվեցին պայմանագիրը ստորագրած սուլթանական կառավարությանը Քուրդիստանի անկախությունը փոխարինել քրդերի ինքնորոշման իրավունքի ճանաչման և 1 տարի հետո հանրաքվեի անցկացման մասին կետով, ինչը, բնականաբար, այդպես էլ կյանքի չկոչվեց: Իսկ ահա Հայոց ցեղասպանության արդյունքում Հավթեթով նաև Սևրի պայմանագրով ու նախագահ Վուդրո Վիլսոնի Իրավարար վճռով Հայաստանի զանապետությանը պատկանող Արևմտյան Հայաստանի հայկական բնակավայրերի զգալի մասը, արդեն 1920-ականներին քրդերը, ի դեմս «Հոյունի», սկսեցին վիճարկել նաև այն բանական փոխզիջումը, որը ձեռք էր բերվել Սևրում: Ուստի՝ երբ քուրդ գործիչներն այսօր հրապարակավ դատապարտում են Հայոց ցեղասպանությունը և մեղանշում են նրանում իրենց նախնիների լուրջ ներակատարության համար, անհասկանալի է դառնում ցեղասպանության արդյունքներից օգտվելու նրանց ցանկությունը:

րոթոյան և ազգահավաքի օջախ ձևավորելու համար:

Իսկ ահա ԽՍՀՄ-ի ու Արևմուտքի սառըպարերազմյան դիմակայության շրջափուլում ձևավորված խորհրդամեյր-մարքսիստական Քուրդիստանի բանվորական կուսակցության<sup>4</sup> շուրջ 30-ամյա պայքարում Թուրքիայի քրդերն այլևս միասնական չէին: Նրանց մի մասը գործակցում էր թուրքական իշխանությունների հետ՝ հաճախ նրանց մայրնելով իր հայրենակիցներին: Դա է պարձառը, որ հետխորհրդային շրջանում, երբ Արդուլա Օջալանի «հանձնման» պրինսիպիան գործարքով ավարտվեց թուրք-քրդական դիմակայության «խորհրդային հանգրվանը», քրդերի շրջանում անկախական գաղափարներին սկսեցին փոխարինել ինքնավարության ձգտումները: Ուստի Թուրքիայում համասոմանյան տեսլականով հանդես եկած չափավոր իսլամականները հնարավորություն ստացան Ա. Օջալանի պատանդառումն օգտագործել «մտրակի ու կարկանդակի» քաղաքականություն վարելու համար:

Այժմ, երբ արդեն անվիճելի իրողություն է ինքնավար Քուրդիստանի ձևավորումը Հյուսիսային Իրաքում, իսկ Թուրքիայում չափավոր իսլամականների քաղաքականությունը հայտնվել է խորը ճգնաժամի մեջ, քրդական շարժումն այստեղ հանդես է գալիս դիմադրության ավելի բարդ ու բազմաշերտ համակարգի տեսքով: Նա սկսել է հաշվի առնել և յուրացնել քաղաքակիրթ Եվրոպայում իռլանդացիների ու բասկերի կիրառած քաղաքական աշխատակարգերը՝ հաջողությամբ զուգորդելով պայքարի բռնի-հեղափոխական և խաղաղ-պառլամենտական մեթոդները: Ուստի ներկայումս ՔԲԿ-ի ռազմական թևը մարտնչում է լեռներում, իսկ քրդամետ «ժողովուրդների դեմոկրատական կուսակցությունը» թուրքական խորհրդարանում միանգամայն քաղաքակիրթ պայքար է սղում ոչ միայն քրդերի, այլև մյուս ազգությունների իրավունքների պաշտպանության համար: Ավելին՝ Դիարբեքիրի, Բիթլիսի կամ Վանի տեղական ինքնավարության մարմինները և բազմաթիվ քրդական մշակութային կազմակերպություններ ոչ միայն շարունակում են ազատորեն գործել, այլև Արևմտյան Հայաստանից «բարեկամական այցեր» կատարել Հայաստանի Հանրապետություն: Արդյունքում՝ թուրքական պետությանը զրկելով իրենց որպես մեկ ամբողջություն թիրախավորելու հնարավորությունից, քրդերը նույն խնդիրը փորձում են լուծել նաև հայերի հետ հարաբերություններում:

Դա է պատճառը, որ վերջին ամիսներին օգտագործելով «Իսլամական պետության» դեմ պայքարի պատրվակը՝ Թուրքիան ինքը նախահարձակ գործողությունների դիմեց քրդերի դեմ՝ փորձելով սադրել ՔԲԿ-ի պատասխան քայլերը: ՔԲԿ-ն իր հերթին օգտվեց այդ հնարավորությունից՝ երկրի տնտեսական ու քաղաքական վիճակը ապակայունացնելու համար: Նման փակուղային դիմակայությունը՝ անկախ նրանից, թե որ քաղաքական ուժը հաղթանակ կարձանագրի Թուրքիայում սպասվող արտահերթ խորհրդարանական ընտրություններում, հետընտրական շրջանում ևս հանգեցնելու է արյունալի բախումների, որոնք ի վերջո ուժասպառության են հասցնելու երկու կողմերին:

4 1978 թ. նոյեմբերի 27-ին ստեղծված այդ կուսակցությունը Ա. Օջալանի պատանդառումից հետո կրել է նաև այլ անվանումներ՝ «Դեմոկրատական-ժողովրդական միություն», «Քուրդիստանի ազատության և ժողովրդավարության կոնգրես», իսկ 2005-ից վերականգնել է հին անվանումը՝ իր ռազմական թևին տալով «Ինքնապաշտպանության ժողովրդական ուժեր» անունը:

**Այսպիսով՝** Հայոց ցեղասպանության հետևանքով տեղի ունեցած ժողովրդագրական աղետի արդյունքում Արևմտյան Հայաստանում խախտված ներքին համամասնությունները 20-րդ դարում և 21-րդ դարի սկզբներին տարածաշրջանի շուրջ արձանագրված աշխարհաքաղաքական դիմակայությունների յուրաքանչյուր շրջափուլում քրդերին ու թուրքերին պարբերաբար ներքաշել ու շարունակում են ներքաշել փոխադարձ ոչնչացման մասդացի մեջ: Այդպես եղավ 1920-1930-ական թվականներին, այդպես եղավ նաև 1980-1990-ականներին, այդպես էլ լինելու նաև առաջիկայում, երբ քրդական շարժումը օբյեկտիվորեն ծառայելու է Թուրքիայի Հանրապետության թուլացման ու ներքին ապակենտրոնացման խնդրի լուծմանը:

Ուրեմն՝ թուրք-քրդական դիմակայության բոլոր նշանակալի հանգրվանները, ճշգրիտ կերպով համապատասխանելով Թուրքիայի ու մանավանդ՝ նրա զավթած Արևմտյան Հայաստանի շուրջ աշխարհաքաղաքական կացության փոփոխության հաջորդական շրջափուլերին, ողջ 20-րդ դարում հստակորեն ի ցույց են դրել իրենց փակուղայնությունը: Ինչպես նախկինում, այնպես էլ այսօր նրանում չեն լինելու ո՛չ հաղթողներ և ո՛չ էլ պարտվողներ՝ երկու հիմնական պատճառներով: **Առաջին՝** քրդերն ի վիճակի չեն կտրելու Թուրքիայի պետական մեքենայի ու նրա առանցքը կազմող բանակի դիմադրությունը և իրենց ուժերը կենտրոնացնելով Արևմտյան Հայաստանի տարածքներում՝ այն դարձնելու սեփական անկախության հիմնաքարը: **Երկրորդ՝** թուրքերն իրենց հերթին արյունալի բախումներ հրահրելու ճանապարհով անգամ ի վիճակի չեն արմատախիլ անելու պայքարի «խառը մարտավարությամբ» առաջնորդվող քրդական շարժումը:

Ուստի հստակորեն գիտակցելով Արևմտյան Հայաստանում շարունակվող թուրք-քրդական դիմակայության փակուղայնությունը՝ մենք պարտավոր ենք ամեն գնով կանխել ներկայումս այնտեղ գլուխ բարձրացնող և իր ինքնության մասին բարձրաձայնող իսլամացած հայությանն այդ աննպատակ մասդացի մեջ ներքաշելու փորձերը, որում շահագրգռություն են դրսևորում և՛ քրդական շարժումը, և՛ այն թիրախավորելու նպատակով նրան «հայկական պիտակ» փակցնող թուրքական ռասիզմը:

Թուրք-քրդական դիմակայության անհաղթահարելի փակուղին մեր իսլամ հարևաններին ապացուցում է շարիաթի օրենքներով ամրագրված այն ճշմարտությունը, որ իրենց չպատկանող տարածքների ու հարստության համար ծավալվող դիմակայությունը **հարամ** է և՛ քրդերի, և՛ թուրքերի համար: **Հարամ է, որովհետև ինչպես ժամանակին երիտթուրքերի կողմից առաջադրված «Մեծ Թուրանի» գառանցանքը, այնպես էլ «Մեծ Քուրդիստանի» ներկա երազանքը Հայոց ցեղասպանությունից ու նրա հետևանքներից օգտվելու նպատակ ունեցող ագրեսիվ ծավալապաշտության դրսևորումներ են:** Դրանք որևէ կապ չունեն 20-րդ դարասկզբի զույգ տասնամյակներում բյուրեղացած «Միացյալ և անկախ Հայաստանի» տեսլականի<sup>5</sup> հետ, որը հիմնվում է Հայոց պետականության պատմական տա-

5 Հարևանների հետ բանական փոխզիջման սկզբունքի վրա հիմնված «Միացյալ և անկախ Հայաստանի» տեսլականն իր նոր՝ «Ազատ, Անկախ ու Միացյալ» ձևակերպումով նույնպես որևէ կապ չունի այսօր էլ երբեմն շրջանառվող «Մեծ Հայաստան» («Великая Армения») օտարամուտ մտակաղապարի հետ: Վերջինս Առաջին աշխարհամարտի տարիներին միջազգային ասպարեզ է ներբերվել ցարական Ռուսաստանի կողմից և օգտագործվել է որպես արևմտյան գործընկերների

րածքներում հետագայում հաստատված թուրքերին ու քրդերին գիտակցաբար արված բանական զիջումների վրա (Սվազի, Դիարբեքիրի ու Խարբեռդի վիլայեթներ, Էրզրումի վիլայեթի արևմտյան և Վանի ու Բիթլիսի վիլայեթների հարավային մասեր և այլն), որոնք հաշվի են առնում մինչև Հայոց ցեղասպանությունն առկա ժողովրդագրական իրողությունները: Հենց այդ բանական փոխզիջումն է Սևրում ամրագրել միջազգային հանրությունը և հանձնել ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի Իրավարարությանը:

Ու քանի որ մեր հարավային հարևանների «քոչատեղերը» հատվել են Հայկական լեռնաշխարհում, հարամի համար թուրք-քրդական պայքարը բումերանգի նման հետ է վերադարձել՝ ողջ 20-րդ դարի ընթացքում ծանր հարվածներ հասցնելով և՛ թուրքերին, և՛ քրդերին: Այսինքն՝ Հայոց ցեղասպանության առաջ բերած ժողովրդագրական աղետը փոխակերպվել է զոհից խլված ավարը կիսելու գործընթացի: Երկու ժողովուրդների համար էլ ծուղակ դարձած փոխադարձ ոչնչացման այս արյունոտ կրկեսը շարունակվելու է այնքան ժամանակ, քանի դեռ քրդերն ու թուրքերը խորապես չեն գիտակցել Իսլամի մեջ հստակորեն ամրագրված «հարամ»<sup>6</sup> և «հալալ» հիմնագաղափարները և չեն ընդունել այն իրողությունը, որ իրենց կրոնի հիմնադիր-մարգարեները ժամանակին ճանաչել են հայերի անժամանցելի իրավունքները<sup>7</sup> դրանով խոստովանելով, որ յուրաքանչյուր ժողովրդի հող-հայրենին **հալալ է** միայն իր համար:

Ուրեմն՝ Հայոց ցեղասպանության իրականացման միջոցով բռնագավթված Արևմտյան Հայաստանի ճակատագիրը մինչ օրս ոչ միայն չի վճռահատվել, այլև **անեծքի** նման կախվել է արդեն շուրջ 100 տարի նրա համար արյուն թափող թուրքերի ու քրդերի հաջորդական սերունդների գլխին: Թե նրանք էրբ կգիտակցեն իրենց բաժին ընկած **խայտառակությունը**՝ դժվար է ասել: Բայց մենք՝ հայերս, դառնալով նման տխուր ու արգահատելի իրողության ականատեսը, չպետք է հրձվանք ապրենք և բավարարվենք միջազգային ասպարեզում սեփական իրավունքների անժամանցելիության փաստի հաստատագրումով: Մենք պետք է մեր հաջորդական սերունդների մոտ վառ պահենք այսօր էլ **արտասուքի հովիտների** վերածված Արևմտյան Հայաստանի մասին հիշողությունը: Սակայն, մեր Հայրենիքին վերատիրանալու առաջադրանքի հանգրվանային լուծումն այսօր նախ և առաջ գտնվում է կենսունակ պետություն և զարգացող երկիր ունենալու և նրա շուրջ ողջ հայությանը համախմբելու խնդրի տիրույթում:

Արևմտյան Հայաստանի ճակատագիրն անորոշ մնալու ակնհայտ իրողությունը պետք է լուսավորի հայերիս ներկա սերնդի ժամանակավորապես

հետ առևտրի մանրադրամ: Ավելի մանրամասն տես **Սամվել Ա. Պողոսյան**, Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի ինքնավարության հարցը ռուսական դիվանագիտության 1914-15 թթ. գաղտնի ծրագրերում, «ՎԷՎ», 2015, N 2, էջ 59-77:

6 Շարիաթում **հարամ**-(արաբ. حرام) են համարվում արգելված գործողությունները: Նույն հասկացության **«արգելված»** կամ **«անօրինական»** իմաստներն առկա են նաև թուրքերենում և քրդերենում: Այսինքն՝ ի դեմս «հարամ» հասկացության՝ մենք գործ ունենք իսլամի հիմքում դրված մի ողջ փիլիսոփայության հետ:

Պատահական չէ նաև, որ արաբերենին ազգակից լեզուներում «հարամ» հասկացությունը հանդես է գալիս ավելի ամոթալի բնորոշումների տեսքով: Այսպես՝ երբայերենում այն նշանակում է **«խայտառակություն»**, իսկ եթովպերենում՝ **«անեծք»**:

7 Ավելի մանրամասն տես «ՎԷՎ»-ի նախորդ համարում լույս տեսած՝ **Գայանե Ս. Մկրտումյանի** «Իսլամը և հայերի անվտանգության հարցը» հոդվածը:

մթագնած հավաքական գիտակցությունը, ամրապնդի ազգային կամքը՝ մեր առջև կանգնած առաջնահերթ խնդիրների լուծումն արագացնելու համար: Որպեսզի հերթական անգամ ձեռքից բաց չթողնենք անկասելիորեն առաջ ընթացող աշխարհաքաղաքական տեղաշարժերի երկայնա տրամաբանությամբ վաղ թե ուշ Հայաստանին ու հայ ժողովրդին ընձեռվելիք **նոր հնարավորությունը**:

*Խմբ.:*

## **TURKISH-KURDISH CONFRONTATION AND THE FATE OR WESTERN ARMENIA**

**Key words** – Kurds, Turks, Western Armenia, a demographic catastrophe, boomerang, Kurdistan Workers' Party (PKK), A. Ocalan, haram, halal.

## **ТУРЕЦКО-КУРДСКАЯ КОНФРОНТАЦИЯ И СУДЬБА ЗАПАДНОЙ АРМЕНИИ**

**Ключевые слова** – курды, турки, Западная Армения, демографическая катастрофа, бумеранг, Рабочая партия Курдистана (РПК), А. Оджалан, харам, халяль.